



24 (179). ԾԻՐԻՆԻ ՈՒ ՖԱՀՐԱԴԻ ՀԵՔԻԱԹ

Էրկու նեճիրվան կէդնին՝
Մեկ՝ աճմու հոսրով թագավոր,
Մեկ՝ Ֆահրադ փայլրվան,
Հգոք կէրթան նեճիր,
Ջեյրան, լոր, կաքավ կը զարկին.
Կր բերին, կէփին, կուտին:
էն մեկ օր՝ կէրթան նեճիր՝
հոսրով թագավոր կըսե.
— Ֆահրա՛դ, էրաղ իմ տեսի,
Յրնկեր ենք խորոտ ջեյրանիմ՝ յետև,
Կը լարենք սարնովի,
Քաշի իմ նետվանեղ, զարկեցի,
Տեսա ջեյրան կը թարլտի մըջ արնին,
Հմա՛լ կը բոռա,
Ճվացի, թոռ իմ քնուց:
— էրազդ ի բարին, հո՛սրով,
Թե գուզիս՝ ես լե՛ տեսեր իմ,
Ջեյրան կը փախներ՝ ես ուր չետևից,
Գնա՛ց, գնաց, դեմ առավ սարի մե,
Նագեհան աչքիս դառձավ մեկ խորոտ աղջիկ,
Թե արև ըսիս՝ արևն ի՛նչ,
Թե լուսնակ ըսիս՝ լուսնակն ի՛նչ,
Կանավ, ըսեց.

— Նե՛ճիրվան, դու բարով էկար,
 Գնա տուն, քու մամուն ըսե,—
 Աղջիկ իմ տեսի, էդ աղջիկն չուղե ընձի:
 Թագավորն զնիաթ կավրե,
 Գընկնա մտքի մեջ,
 Տահրադ կը դառնա ըդոր.
 — Յորի՞ն զնիաթդ ավրիր.
 Քու տուն շեն, էրազ է,
 Մարդ հազար էրազ կը տեսնա,
 Մըղի կը մնեք ըսենք՝ էրազն ի բարին:
 Թագավորն անջախ կը չերես-ծիծղի,
 Կը խթե ուր ձին: Կէրթան:
 Շատ կէրթան, քիչ կէրթան՝
 Կը մտնան Հայոց հող:
 Թագավոր կըսե.
 — Մենք ուրիշ հող ինք մտի,
 Իրավո՞ւնք է մտնանք:
 Տահրադ վըր ըդոր կը ծիծղա, կըսե.
 — Թա՛գավոր, քըզի ի՞նչ իրավունք,
 Յուր չուղիս՝ կէրթաս,
 Քու նետն չուր չուղիս՝ կը թալիս,
 Մը մո՛ռնա՝ օր նեճըրվաններուն
 Մեկ բան է ուրանց հող, թե ուրիշ,
 Զնեճիր տեսավ՝ կը զարկե:
 Զձիանք կը քշին, կէրթան,
 Շատ կէրթան, քիչ կէրթան,
 Կը մտնան պզտիկ քաղաք մե,
 Փողոցով մե գընցնան,
 Կը տեսնան հանդե մըտ բաց դարգահին՝
 Աղջիկ մե կաներ է,
 Աղջի՛կ, ի՛նչ աղջիկ,
 Թե արև ըսիս՝ արևն ի՛նչ,
 Թե լուսնակ ըսիս՝ լուսնակն ի՛նչ,
 Դըռ հմալ խորոտ մե չէ՛ղեր է ու չէ՛ղնի:
 Էրկու նեճըրվան՝ վըր ձիաներուն
 Կը մըխվին, կը կորցուն ուրանց:
 Եք ուշքի գիկան՝
 Թագավորն ուր էշխից զձին կը խաղցու,
 Կը հարցու աղջկան.

— Աշխարհի՛ խորտախիկ, քու անունն ի՞նչ է,
 — Շիրին,
 — Շիրին, թաղավոր մեռնի քու յոտաց,
 Յելեր իմ նեճիր,
 Քրդի օր տեսա՛ մոռցա զնե՛հիրն ու աշխարհ,
 Զանաթի փերի, ըսե՛,
 Զրո դա՛ռնա թալուհի:
 Շիրին կը ծիծղա, կըսե.
 — Օղորդ է, սիրու մեջ մարդ զխելք կը կորցու,
 Հմա՛ ինչ խղեր կորցու՝ քիչ մե կը պահե:
 Ընձի զըռ չրս հանչցի,
 Յորի՛ն կը թեթևաս,
 Յորի՛ն շուտ կը բանաս քու սիրտ:
 Կէրևա՛ կնիկ շրս տե՛սի.
 Սիրտն օր չը սիրե՛
 Թաղավորն ուր մոտ յա՛ խիլ է, յա՛ տիլ:
 Շիրինի խոսվածք դուր դիկա Ֆահրադին,
 Քթի տակ կը ծիծղա, մըջ մտքին կըսե.
 — Խո՛սրով, էրազն ի բարին:
 Թաղավոր կը տեսնա՛ օր աղջիկն
 Այիլ ու մայիլ՝ Ֆահրադին կիշկե,
 Կը կատղի, կը քշե ուր ձին, կէրթա:
 Ֆահրադ կը դառնա աղջկան.
 — Շիրի՛ն:
 — Ֆահրա՛դ:
 Խոսք կիտան, խոսք կառնին:
 Ֆահրադն, աշխրով մեկ, կէրթա տուն,
 Կը հասնի, զմամ կը դրկե:
 — Մա՛րե, աղջիկմ՛ իմ տեսի,
 Թե արև բսիս՝ արևն ի՛նչ,
 Թե լուսնակ ըսիս, լուսնակն ի՛նչ.
 Խոսք տվինք, խոսք առանք, մա՛րե՛:
 Ըզոք թըղ մնան ուրանց տուն,
 Մենք էրթանք մըտ Խոսրով:
 Խոսրովն է, կը մտնա ուր քոշկ ու սարեն,
 Ուր նիաթն հմա՛լ է կախի, հմա՛լ կը մթնի,
 Ինչ ամպն ի մըջ խեղդ աշնան:
 Նազիր կը հարցու.
 — Քու ծնած օրեն չուրի յըսօր՝

Քրդի հմալ շրմ տեսի.
 Յորի՞ն է քունիաթն ավեր,
 — է՛, — կըսե, — Վզը՛րմիր,
 Հըտ Ֆահրադ գացեր ենք նեճիր,
 Զծիանք քշինք, հասանք Հայոց հող,
 Մտանք պզտիկ քաղաք մե.
 Տեսանք մրտ րաց դարգահին՝
 Մեկ հուրի-փերի է կանուկ,
 Թե արև ըսիս՝ արևն ի՛նչ,
 Թե լուսնակ ըսիս՝ լուսնակն ի՛նչ.
 Իմ պապե Զրմշուդ լե, ուր բիլոռ բաժակով,
 Դըռ հմալ փերի շր տեսի:
 Ես ըսի.
 — Կէղնի՞ս թագուհի:
 էն ըսեց.
 — Ընձի դըռ շըս ճանչցի,
 Յորի՞ն կը թեթևասս,
 Յորի՞ն շուտ կը բանաս քու սիրտ,
 Կէրեա՛ կնիկ շըս տե՛սի.
 Սիրտն օր շը սիրե՛՛
 Թագավորն ուր մոտ յա՛ խիլ է, յա՛ տիլ:
 Վզըրմիր զճակատ կը շփե,
 Զունքեր գիջու ցած.
 — Թա՛գավոր, — կըսե, — աղջիկ սիրեր է դՖահրադ:
 Քու հուս մը՛ կտրի.
 Մեծորեք ըսեր ին՝ չուր ուժ կա՛ սերն յոնի կը վի՛գե:
 Դու՛ գլուխ, Ֆահրադ քու յոտներ.
 Յուր ըսիս՝ կէրթան:
 — Օղո՛րդ է, հմա իմ մտքին հարցու, —
 Յևլնամ հետ կովիմ՝ չէ՛ ղնի.
 Կէղնիմ խայտառակ.
 Քա՛նի, քա՛նի հաղ իմ մեջք զարկեր է գետին:
 Զարկիմ սպանիմ՝ չէ՛ ղնի.
 Կրսին՝ ալչախ, քու մամու ծծեր օր շորցան՝
 Ֆահրադի մամն է քըղի կաթ տվի, մեծցուցի:
 Խորո՛ւրդ տու, Վզը՛րմիր:
 Վզըրմիրն հըտ սատանութենին՝
 Իմալ ջուխտ կթոն՝ մըջ դզին դրուկ:

— Յորի՞ն հըտ փայլը վսնին մտնաս կոխվ,
 Բու ծծի կաթն հարմիս, սսւանիս.
 Մեկ կնիկն էրկու մարդ ե՞ք է ունեցի,
 Յա՛քըղի, յա՛ ընոր:
 Արի մեկ պայման դիր,—
 Կանչե ղՖահրադ, ըսե,—
 Կաթընկեր ախպեր ինք էղի,
 Աղջկամ՝ յապով՝ չըմ չուղի հարմի իմ կաթ,
 Յսրի՞ն գեշութենն էնինք.
 Քըղի քառսունն օր մուգաթ,—
 Առ ղըլունդ ու թիակ՝
 Գնա Բիսութունն սար ծակե,
 Քառսունն օրվա մեջ ծակեցիր, չընցա՛ր,
 Շիրին թը՛ղ քըղի էղնի,
 Չը ծակեցիր չընցար՝
 Թը՛ղ էղնի ընձի.
 Դու կէրթաս՝ ղոռով կը փախցուս ղաղջիկ,
 Օր լսե կնիկդ է, դառձի՛
 Կսկծու՛ կըստանն ուրին,
 Խի՛լ դեմնա՛ աչք դի՛ստըկի:
 Խոսրով թաղավոր կուրախնա,
 Կը կանչե ղՖահրադ:
 — Ֆահրադ,— կըսե,— կաթընկեր ախպեր,
 էս խոհեր ժամանակ չընկեր ինք էղի,
 Չըսեր ինք՝ քու աչքին ունք կա,
 Յորի՞ն մեկ աղջկա յապով կովինք.
 Քըղի քառսունն օր մուգաթ,
 Կառնիս ղըլունդ ու թիակ,
 Կէրթաս ի Բիսութունն սար,
 Մըջ քառսունն օրվան կը ծակիս,
 Գընցնաս սարի մեկել դեն.
 Մակեցիր, չընցա՛ր՝ Շիրին քո՛ւմն է,
 Չը ծակեցիր չընցար՝ ի՛մն է:
 Ֆահրադ կըսե.
 — Խո՛սրով, ըդի քու խելքի բան չէ,
 Գինամ քըղի ո՛ն է դաս տվի.
 Շիրինի սիրուն՝ կէրթամ:
 Կէրթա, կառնե ղըլունդ ու թիակ,
 Կը հասնի սարին,

Գիշեր ու ցերեկ իջնե մեկ,—
 Կր փորե ու կը փորե,
 էն է, հա՛, տի յընցնա էն դեն,
 Մարդ մե գիկա մըտ Ֆահրադ:
 — Քու տուն ավիրի, իմալ օր ավրեր է,
 Դու յոգա ղսար կը փորիս,
 Խոսրով թագավոր զՇիրին փախցուցի,
 Բերեր է, բե՛ֆ կը քաշե:
 Ֆահրադի աշքեր կը մթնին,
 Զոքեր կը դոզան.
 Քիչ մնա սիրտն ձնդու սլես թոնա դուս:
 — Վա՛յ, նա՛ մարդ,— կըսե,— խաբե՛ց գիս:
 Զթիակ կը թալե վեր,
 Զվիղ դերկընցու,
 Թիակ գիջնա վըր վզին,
 Գլուխ կը թալե մեկ դեն,
 Զանդակ կը թալե մեկ դեն:
 Խաբար կէրթա հասնի Շիրինին,
 Շիրին օր կը լսե,
 Կը քաշե զխանջաբ, կը մտու ուր սիրտ,
 Պառեկեն գելնա դուս,
 Խոսրով թագավոր ղխելք կը թուու,
 Գընկնա սար ու ձոր, ձեն կիտա.
 — Շիրի՛ն:
 Զեն շկա:
 — Ֆահրա՛դ:
 Զեն շկա:
 Հմա՛լ մեռան Շիրին ու Ֆահրադ:
 Արդար մեռնողներուն ըսեք օղորմի: Ա՛մեն:

